



## Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

### ԱՅՐ ՇՆՈՐՀՅԱԼ Ի ՎԵՐՈՒՄԸ (Եղիշե Զարենցի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Եղիշե Զարենցը, իր անօրինակ կյանքի փորձով ու գործով, ստեղծագործական իմաստության բազմաթիվ դասեր է թողել սերունդներին: Ամա դրանցից մեկը.

Ամեն պոետ՝ գալիս՝ իր հետ մի անտես նետ է բերում, ել նետն առած, խոհակալած—որս է անում երգերում. Բայց դառնում է պոետ նա մեծ ոչ թե նետի մեծությամբ, Այլ նշանի ահագնությամբ, որ հանճարներ է սերում:

Սա բանաստեղծական արվեստի խորին խորհուրդներից է: Խոկական մեծերը դրան հասնում են հոգևոր մաքառման ու դժվարին փորձությունների ճանապարհով: Հնատըրյալների համար դա հաճախ մի ամբողջ կյանք է արժել: Դրանցից է նաև 20-րդ դարի հայ մեծագույն բանաստեղծներից մեկը: Իր վերընթաց ճանապարհի յուրաքանչյուր շրջադարձի նաև ստեղծագործական հայտնության մի նոր նետ է արձակում ամեն անօգամ խոցելով ժամանակի մեծագույն նշաններից մեկը: Այսպես իրար են ձուլվում ժողովրդի ու նրա զավակի, դարի ու բանաստեղծի կենսագրությունները:

20-րդ դարի սկիզբը: Հայ ժողովրդի չարչարանց պատմության թերևս ոչ մի շրջանում այդիսի անողոք սրությամբ դըրված չէր եղել լինել-չլինելու ճակատագրական հարցը: Զիար պետականություն, չկար այլ մի ուժ, որ դառնար ազգային վերա-

ծըննդի գրավական ու փրկության խարիսխ: Պատմության լուծը ամբողջապես ծանրացած էր մտավորականության ուսերին: Ի՞նչ անել: Մեծ Թումանյանը տիսուր հոգեհանգիստ էր կարդում իր ժողովրդի անմեղ զոհերին՝ աշխարհին ուղղելով ցավի ու դառնության իր ծանր խոսքը. «Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսակն կմնա»: Ավետիք Խահիակյանը իր «անրիծ ու մաքուր» և վիրավորված հայրենասիրության հառաջն էր հանում սրտի խորքերից.

Ե՞լ-ջան հայրենիք, ինչքան սիրուն ես, Սարերդ կորած երկնի մովի մեջ, Զրերդ անուշ, հովերդ անուշ, Մենակ բալեքդ արուն-ծովի մեջ...

Վահան Տերյանը տենդագին որոնում էր «ցնորք Նահիրին», «ահով կանչում» էր նըրան՝ ազգային արժանապատվության և հեռավոր հոյսի դողողուն ցոյքի մեջ չկարողանալով թաքցնել հոգու տագնապը.

Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին եղած իմ երկրի, Մա՞ն է արդյոք, թե նինջը քեզ Պատել, պայծառ Նահիր...

Խոկապես, ի՞նչ անել: Օգնություն հուսալ քաղաքակիրթ ազգերից: Բայց, պատմությունը բազմից հերքել էր այդ հոյսը: Ապավինել հոգևոր անկախության հեռանկարին: Բայց դա պատրանք էր, որ չէր կարող իրականանալ՝ առանց համապատաս-

խան ազգային հողի: Մնում էր անորոշ հույսի, անվերջ երազանքի ձգվող ճանապարհը, որ առաջմ անհայտություն էր տանում: Այդ անհայտության ճանապարհորդն է դառնում նաև պատահի Եղիշե Սոլոմոնյան՝ պազար Չարենցը:

Վաղ է սկսել նա իր բանաստեղծական փորձերը. ընդամենը տասնհինգ տարեկան էր, երբ «Պատահի» ալմանախում լույս է տեսնում նրա առաջին ուսանավորը: Բայց այստեղ իսկ արդեն ակնհայտ են չարենցյան տարերքի հիմնական որոշչները՝ անձկության թամբիծն ու հեռուների անզուսպ երազանքը, մենակության մորմոքն ու բուռն կրքերի կարուտը: Արթանցող հոգու այս լարումները խորանում ու ծնվավկում են «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Կապուտաչյա հայրենիք», «Ծիածան» քնարական շարքերում: Թափառական տենչը հաստատուն հենարան է որոնում կյանքում ու չգտնելով՝ ինքնակամ հանձնում է իրեն կապոյս երազների ցնորքին: Խորհրդապաշտ բանաստեղծության օրորող թամբիծն ու նրամոլ տարերքը ամրողակեն ողողում են երիտասարդ Չարենցի աշխարհը: Դա սովորական տուրք չէր ստեղծագործական ուսումնառության անհրաժեշտությանը, այլ մերնոյի աղավաղված ճակատագիրն էր՝ բեկված քնարերգության զգայուն հայելու մեջ: Բանաստեղծը որոնում էր՝ իր նետի սրովագրությունը փորձելով հայրենի և օտար երգարվեստի կայծքարերի վրա, որոշելով իր համար բանաստեղծության գլխավոր թիրախը:

Բազմաթիվ ու բազմապիսի խոհեր են հուզում Չարենցի պատահեկան քնարը: Արևի երազանք ու գունատ գիշեր, «արելվանման, արնավատ խոսքի» խորխանություն ու թախծոտ շշուկների մեջոնի՝ Վահան Տերյան, «ձյունապատ լեռներում» հնչող զրեզուն կարոտ և «աստղային մուտի» տանջող լուրջուն... Հակասություններ էին սրանք, որոնց խաչուղիներում իսկապես մոլորված էր բանաստեղծի ուղին: Մեծագույն ցավը, սակայն, հայրենիքի ցավն էր: Չարենց բանաստեղծի ծնննեն ու առաջին մկրտությունը կատարվել է այդ ցավի մեջ:

Այս տեսակետից ուղենշային արժեքը ունեն վայ շրջանի երկու բանաստեղծություն: Դրանցից առաջինը՝ «Վահագն», մի ամբողջ սերնոյի դառը վերապահությունն է հայոց ճակատագրի հանդեպ: Անցել է դարերի միջով Վահագնի առաջելը, սերունդների համար դարձել է փրկության հույսի խորհրդանշան: Երգել են առեւտներն այդ հույսը, իսկ առասպելը առապաւել է մնացել է: Դաժան իրականությու-

նը ցրել է բոլոր պատրանքները՝ ջնջված երազի տեղ թողնելով արյունոտ մի վերք.

Եվ հավատացինք հարրած ու գինով, Որ դու կա՞ հզոր, մարմնացում Ուժի — իսկ նրանք եկան՝ արյունով, հրով Մեր երկիրը հին դարձրին փոշի...

Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ, Որ ընտեն քաղցած ոհմակներին կեր — Մեր կյանքի հիմներն անդունդը ընկան Եվ արնուու միգում ճարճատում են դեռ...

Ողբերգական նոյն թեման է հնչում նաև «Հարդագողի ճամփորդներում»: Աչքերի մեջ պահած «երկնային ճամփաների հեռուները դյութական», սիրահարված սեփական հոգու տրտմությանը, տարված «հավերժական հեռուների երազով», գորչ օրերի տաղտկության դեմ պարզելով «ողջակիզվող միրտը» անտարբեր աշխարհի դըվարին ուղիներով քայլում է երազողների սերունդը, քայլում է ժողովուրդը՝ որոնելով «պատահական աչքերում հարդագողի ուղիները ուկենան»: Մութ, անհեթեթ կյանքը դառնում է «հավերժական մի փնտորում»: Բայց զոց են հույսի արահետները, հավատի «լուսավոր հեռուները» անհամ: Անկենդան հայացքներից սառչում է միրտը, ցնդում է «կապուտաչյա երջանկության առասպելը».

Եւ՝ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ, — Ու խնդացին լուսավոր մեր աչքերին, Բութ հեգնեցին մեր կարուները հրկեզ — Ու հեռացան: Ու ոչ մի լույս չքերին...

Իր առաջին բանաստեղծական շարքերում Չարենցն իսկապես խորհրդապաշտ է: Բայց եթե բուն արվեստում նա փրանում էր պատկեր-նշանի բազմաշերտ խորհուրդը, ապա կյանքում նրա որոնումների նպատակը հայտնիքի ճակատագրի առեղծվածն էր: Ով ներ մենք, որտեղից ենք եկել, ո՞ր ենք գնում, ինչո՞ւ է պատմությունն այսքան դաժան եկել մեր հանդեպ, ինչպես ենք կարողացել այդ արհավիրքների մեջ ստկուն ու բարձր պահել նաիրյան ոգին, անվերադարձ մահացել է նա, յեւ հարություն պիտի առնի մի օր... Հարցեր էին սրանք, որոնց երիտասարդը առաջմ չէր կարող պատահանել արվեստի լեզվով:

Ակալում է, սակայն, առաջին համաշխարհային պատերազմը: Ամենուրեք կամավորական ջոկատներ են կազմակերպվում: Հայրենիքի փրկության հույսը առավել քան երբեք իրական էր թվում: Տաս-

նորամբար Զարենցը խանդավառ միանում է կամավորական խմբերին, չէ՞ որ վերջապես Անդրկայացել էր առիթը՝ կյանքով ու գործով լուծելու տանջող հարցականների հանգույցը։ Սակայն այդ նորածագ հույսը ևս հոդացրիլ պիտի լիներ պատերազմի արյունու ճանապարհներին։ Բանաստեղծը գրում է «Դամբեական առասպեկ» պետք՝ լուսավոր երազների փոխզման մի նոր սրբառու դրամա։ Գնում են ոգեշնչված պատահները՝ անձանոթ աշխարհի ուղիներով, գնում են՝ «Կապույտ երկնքի խորովամբ արբած», սրտներում պահած ազատ հայրենիքի սրբազն տեսիլը։ Բայց դրա փոխարեն քայլ առ քայլ թանձրանում է սարսափի մղձավանշը՝ նրանց «Զահել ու բազմերազ» հոգիները մատնելով ծանր տարակույթի։

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր կախվել մեր գլխին այսպես կորորեն։ Ինչո՞ւ են փոռում այսքան ցավ, ավել, չողմերը այս չար երբ պիտի լոն։ Եվ ո՞վ է լարում այսպիսի դաւեր— կյանքը դարձնում նզովյալ գեհեն։

Պատերազմից հիալափակված, արդեն քանիներորդ անգամ անհայտ ուղիների գալությունանը մատնված բանաստեղծին իրադարձությունների ալիքը մետսում է հեռավոր Ռուսաստան։ Նրա հայացքի առջև մի նոր ու անձանոթ աշխարհ է բացվում, որ նման էր և նման չէր իր երազների ուսկի եզերքին, այն երևակայական կյանքին, որ նրա վաղ շրջանի քնարական երգերում «երկնքի պես անհո՞ւն, անհո՞ւն» էր, «կորած աստիճ պես հազարանուն...»։ Դա ոչ թե ներքիաթային, այլ իրական իրաքը էր։ Անձայրածիր երկիրը բռնված էր հեղափոխության բոցերով։ Ելել էին «հուսավառված ու կրակու» ամրոխները, զարկվածների ու զրկվածների անվերջ բանակները, ելել էին, որ թոթափեն դարավոր ստրկության լուծը, կառուցեն նոր աշխարհ։ Հանճարեղ արվեստագետի խորաթափանցությամբ Զարենցն օգում էր, որ այդ իրադարձություններից պետք է սպասել նաև կիսով չափ բնաշնչված իր ժողովրդի փրկությունը։ Բնազդական այդ զգացողությունը վերածում է խորին համոզությին, և հայ բանաստեղծը գրչով ու կյանքով գինվորագրվում է հեղափոխության երթին։

Միանգամից փոխվում են բանաստեղծի աշխարհի գույներն ու ձայները։ «Ողջակիզվող կրակ» բանաստեղծությունների շարքը նոր սկիզբ էր։ Զարենցը մուտք էր գոր-

ծում կրակու ավյունով եռացող մի աշխարհ, որը հարազատ ժողովոյի բախտի արահենու ձուլվում էր բովանդակ մարդկության լայնահուն ճանապարհին։ Նպատակի հեռուն տարտամ էր դեռ, խորհրդանշական պատկերները դեռ «երեր, անմարմին, անձն» էին։ Բայց բանաստեղծական խոսքը դարձել էր հատու, կապոյտի և սպիտակի օրորող գունախաղերին փոխարինել էին ալ կարմիրի, բոցագույնի այրող երանգները, ծովը երազային ոիթմը տեղի էր տախս արագընթաց չափի շառաչուն շեշտերին։

... Երկիր իմ, սիրտդ արդյոք  
Զգո՞ւմ է՝ հուրը երգիս։

Զգո՞ւմ է տեմդը հոգուս,  
Երկունք կարմիր ու մառ.  
Երկուս է այսօր հոգիս,  
Երկիր իմ, քոյր իմ ու մայր...

Հեռու եմ,—ո՞ւր եմ հիմի...  
Երգուս եմ։ Երգս-կրակ։—  
Մրրիկ է կյանքը այս մի,  
Թոշում է հողմից արագ։...

Զարենցի քաղաքացիական դիրքորոշումը վերջնականացնելու ճշգրտվում և հաստատվում է հեղափոխական պումբներում։ Այդ պումբները, հատկապես «Ամրոխները խելագարված»-ը, գաղափարական, ժամանակակից ու ուսումնական նոր որակ էին հայ բանաստեղծության մեջ։ Հարստացած կենսափորքը, կատարված հեղափոխության անհերքելի փաստը՝ մի կողմից, մյուս կողմից՝ խորհրդապաշտական դարոցի դաւերը, օգնում են հայ բանաստեղծին նվաճելու արվեստի մի այնպիսի մակարդակ, որը խորհրդանշան իր բազմիմաստությամբ արդեն կապվում է ոչ թե անհայտ ու անմարմին եզերքների, այլ միանգամայն իրական ուժերի հետ։ Զարենցի խորհրդապաշտությունը գործուն կենսական բովանդակությունն է ստանում։

Արդեն «մոտիկ», մոտիկ էր այնքան երազած աշխարհի գալիք։ Բանաստեղծը, իրը հասարակ զինվոր, այդ գալիքի համար կովողների շարքերում է։ Նա անցնում է քաղաքացիական կողմների փորձություններով։ Սա արդեն արյունահեղության այն դանթեական ճանապարհը չէր, որին կոյր հավատով զինվորագրված հայ պատահին շուտով պիտի հասնելու մի դարձ ճշմարտության՝ «մենք՝ զոհ, մենք՝ դամիճ՝ որիշի ձեռքում...»։ Հին աշխարհի դեմ մըղվող աշխատավորական կոիկը խորապես

գիտակցական էր, ուներ իր հստակ ու վըստ նպատակը: Հայ բանաստեղծի համար այդ նպատակը նաև իր «հնամյա ցեղի» ազատությունն էր, իր ավերված երկրի այնքան սպասված վերածնունդը: Եվ պատմությունն այս անգամ չար կատակ չարեց հազար անգամ խարված ժողովովի հետ: Երականացավ բանաստեղծի երազը, որ նաև ժողովովի երազն էր: Չարենցը կարող էր հապատաճալ, իրոք, որ ինքն էլ իր երիտասարդ արյունից կաթի է տվել, որպեսզի «հսկական մարմին առած»՝ կանգնի «խանդավառ նախրին»: Կարող էր հապատաճալ նաև, որ առաջին ինքն է երգել «կարմիր ընկերների» ազատության կողմը, առաջիններից մենք ինքն է եղել, որ խանդով ու ավյունով հվիրվել է իր նոր հայրենիցի հոգևոր կյանքի կառուցմանը: Բայց եթե կյանքի ճանապարհը ուղիղ էր՝ ճառագայթի պես, ապա արվեստի ուղին երեսն խոտորվում էր՝ ժամանակի դժվարի անցուղարձերից:

20-ական թվականներին Չարենցի ստեղծագործության մեջ կատարվում են դրամատիկ տեղաշարժեր: Առժամանակ տարվելով ձախ արվեստի «միտինգային» ժխտուով, «երկարեւ երազների» երգով՝ նա խկական ներշնչանքի «պայծառ, մաքոր շունչը կենդանի» փոխում է «քետոնի թևու», սիրող դառնում է «պողպատե աճիվ», իսկ ինքը՝ «անկիրք աշխարհի պուետ»: Բանաստեղծը հետագայում խոր ափսոսանքով պիտի գրեր.

Երեխայական մի խանդաղանքով Ես նրա ընտրեցի իրու հարսացու, Եվ երգս դարձավ անուժ ու անթով, Եվ մոլորվեցի իրերի բանում:

Մոլորությունը, սակայն, երկար չի տեսվում: Հոգևոր անկման այդ օրերին իսկ Չարենցին այցելում է Սալյաթ-Նովայի լուսավոր ուրիշականը: Մեծ գուսանի «հանգու» նա ստեղծում է «Տաղարան» շարքը՝ հայ քնարերգության գոհարներից մենք, գրում է «Են իմ անուշ Հայաստանի»-ն, որ Ավետիք Խահակյանի խոստվանությամբ՝ հայ հայրենասիրական երգի գլուխորոշոցն է: 1925 թ., Սովետական Հայաստանի կառուարության առաջին նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի նախաձեռնությամբ, Չարենցն ստեղծագործական ճամփորդության է մեկնում արտասահման: Եվրոպայի խոշորագույն թանգարաններում նա դիտում է համաշխարհային արվեստի անմահ կոթողները, հաղորդակցվում է մեծ արվեստագետների հետ և, հոգով հարստացած,

վերադառնում է հայրենիք: Բանաստեղծի հոգոր տաղանդը հաղթանակով է դուրս գալիս ձախության փորձություններից՝ ապրելով մի նոր շոալլ վերածնունդ: Դիպուկ է ասել ինքն իր մասին.

Քո անկումները եղել են միշտ Եղանակի պես պատահական, Սյովես երկինքն է թափում համեստը թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ:

Բայց հետո, հետո,—հետո կոկին Բացվում է օրը — և վերնից Պայծառ արևն է ժապում էլի Հրով սրբած ու մաքուր երկրին:

1930 թ. լույս է տեսնում «Էպիկական լուսաբաց» ժողովածուն: Գրական միտքը մի պահ շանում ու շփոթվում է: Մեծ աղմուկ է բարձրանում բանաստեղծի անվան շուրջը, ինչպես լինում է հաճախ, երբ ստեղծագործական շատ բարձր թոհքըները միանգամից հասանելի չեն դառնում ժամանակակիցներին: Խոռվահովզ գիշերից հետո՝ Չարենցն ապրում էր իր նոր երգի խաղաղ ու վճիռ լուսաբացը: Դա սովորական հայ բանաստեղծության տասնամյա որոնումների համբագուման էր, ապացուցն այն բանի, որ հայրենի երգի ակունքները դեռ չեն ցամաքել:

Մեծ արվեստի դիրքերից բանաստեղծը բանավեճ է մղում ինքն իր հետ և ժամանակի գրական հոգերանության հետ: «Թե ուզում ես երգ լսեն, ժամանակի շունչը դիմարձիր... ու մի դավիր քո քնարին»,— իրև ծրագիր՝ պարզ ու բնական այս պահանջը հեշտ չէր իրագործել ստեղծագործական փորձի մեջ: «Ինչո՞ւ է դարը այսքան ահագին, և մարդիկ այսքան փոքրիկ ու չնչին»,— դեմով այս հարցը՝ Չարենցն ըստ էության մատնացուց էր անում գրական կյանքի բնորոշ դրաման: Երկրում կատարվել էին իսկապես դարաշրջանային նշանակության փոփոխություններ: Մարդկանց կեցությունն ու բարքերը հեղաշրջվում էին գլխապտույտ արագությամբ: Զնկավորվում էր նոր անհատը՝ իր ներքին աշխարհով շատ ավելի բարդ ու հակասական, քան երբեւ եղել է պատմության մեջ: Հոգևոր կյանքը, սակայն, դանդաղ էր վերակառուցվում: Մանավանդ բանաստեղծական նոր գիտակցությունը ինքնահաստատման ճանապարհին ենթակա էր կրրկնակի փորձության՝ մի կողմից պետք է հայտահարեր հին ավանդույթի կաշուն ձգողությունը, մյուս կողմից՝ նորամոլ ծայրահեղությունների վտանգը: Հատկապես

այս վերջինները աճխուսափելի էին, քանի որ իրոք անհնար էր կյանքում ծավալվող իրադարձությունների արագությամբ լուրացնել նաև ժողովրդի բազում դարերի հոգևոր փորձը և բարձրացնել այն մի նոր աստիճանի: Այդպիսի պահերին կյանքը համախ ինքն է ծնում հախուուն ծխոտումի հոգերանությունը, որ կարող են կրել ինչպես միջին ձիրքերը, այնպես էլ խկական մեծությունները: Խնդիրն այն է միայն, որ եթե առաջինների համար այլևս չի կարող լինել վերադարձի ուղի, ապա վերջինները մենց այդպիսի իմաստուն «վերադարձ» մեջ են հայտնաբերում ժամանակի խորհուրդը: Պատահական չէ, որ 20-ական թվականների կեսերից ի վեր Չարենցի ստեղծագործության մեջ անդադար արձարկում է վերադարձի թեման: «Եպիկական լուսաբացի» սկզբում ևս բանատեղը դրզունում է իր մաքուր ներշնչանքի ոգու վերադարձը.

Վերադարձել ես դու կրկին ահա  
Անշափ հժկարին մի ճանապարհով.  
Չեղրի ծանրաձուլ մի քնար պահած՝  
Կանգնել ես կրկին դու կողքին, սակայն  
Համան ես հիմա ու խատաքարո:

Անցել էր հեղողիական փոթորիկների դարաշրջանը՝ թմրուկի ու «վարար կրքերի» երգով, սկսվել էր խաղաղ կառուցումի «մեծ առօրյան», որ ստիպում էր ձեռք քաշել «զգացմունքների հորդանքից անձեւ» և վերսին մտնել «խոհով ծանրացած» երգի հունը: Բանաստեղծի դեմ աղմկում է Անրիկան, իրու «անքուն կրքերի, զգացմունքների լայն, անծայրածիր օվկիան»: Հեշտ չեր, իրոք, այս ամենի միջով օրերի ճշգրիտ ճպատակակետին ուղղել երգի առագաստը: Հենց այդպիսի դժվարին երթի է դրս գալիս վերածնված հայ բանաստեղծը: Հարցն, իհարկե, չեր վերաբերում միայն բանաստեղծության թեմատիկայի փոփոխությանը: Չարենցի մտահոգություններն ավելի խոր գելագիտական բովանդակություն ունեին: Խոսքն իրերի անշունչ աշխարհում արնաքամվող գրականությունը նորից կյանքի իրական հոգսերին, մարդկային ճշմարիտ ապրումների կենարար ակրոնքն մոտեցնելու հրամայական պահանջի մասին էր.

... Միաչքանի, միտուանի  
Մարդն են երգում հիմա անթեւ.  
Մարդն են երգում, որի կրծքում  
Երգեհոն է դրված կարծես,  
Որ ճիշեր է միայն փեղձում,  
Չունի ո՞չ խանդ, ո՞չ խինդ, ո՞չ սեր:

Սրբեատը մեռնում էր, հարկավոր էր հարուրուն տալ նրան: Այս դեպքում էլ գործի ծանրության ճնշող բաժինը պիտի կրեին մեծերը, նրանք, ովքեր չեն վախենում դժվարին վերելքից ու անկումներից, ում համար նաև սարսափելի չեր առաջընթացի օրենքներից մեկը՝ վերադարձը դեպի հարկադարար թողած եզերքները: Խակ ի վերուտ սահմանված այդ առաքելության մեջ մեծերին միշտ է զրավիգ են լինում անցյալի մեծերը: Հոգևոր մաքառումների ճանապարհին Չարենցի համար վերստին արվեստի փարոս են դառնում Դանեն ու Պայտեն, Պուշկինն ու Հայմեն, Թումանյանն ու Տերյանը... Կյանքի վերջին օրերից մնացած մի ձեռագիր պատառիկում բանաստեղծը ետադարձ հայացքով ներկայացնում է իր հոգւոր հաստացման ճանապարհը, որ ձգվում է ազգային ու համամարդկային մշակույթի անշափելի նեռուները՝ «մեր հին հանճարեղ վեպից» մինչև «մեր միշնադարյան հայրենները սեգ», մինչև Հովհանքան ու Սայաթ-Նովա, «Ֆարսի Ֆիրդուսուց մինչև ուստական ֆետ», «Սիրի երգերից մինչև Պատեռնակ», պուշկինյան երգի պայծառ ավերից մնան խորհրդապաշտություն: Բանաստեղծն իրեն հզոր ու առնական է զգում ազգայինց համամարդկային և հակառակ տանող ուղիների հանգուցում:

Կանգնել եմ ձեր դեմ—  
Ե՛վ պուտ, և՛ այր—  
Դեմքով ժպտադեմ  
Երգով պայծառ—  
Կանգնեած եմ ահա՝  
Երգասան վերջին՝  
Եմ նայիրական  
Երգի կամուրջին,  
Ու շուրջ եմ նայում—  
Ու նեռուն պայծառ՝  
Համայն աշխարհի  
Երգասան դարձած:

Մեկ անգամ ևս հաստատվում է այն մեծ ճշմարտությունը, թե արվեստագետի և իր ժամանակի կապի գլխավոր հանգույցը անցած սերունդների հոգւոր փորձի յուրացումն է, պարտքի ու պարտականության խոր գիտակցությունը՝ ինչպես ներկայի ու գալիքի, այնպես էլ անցյալի հանդեպ:

Որքան ավելի էր Չարենցը մերձենում կատարյալ արվեստի բարձունքներին, նրա ստեղծագործության մեջ անքան ավելի էր խորանում պատմության ու ներկայի կապը: Բանաստեղծի իմաստացած հայացքը ներկայի մեջ տեսնում է պատմիթյան շարու-

Զակուրյունը, պատմության մեջ՝ ներկայի հեռավոր խորհուրդը: Նրա բանաստեղծական մտորումների կիզակետում հայտնվում է պատկեր-խորհրդանշանների մի նոր համակարգ: Եթե «Էպիկական լուսաբացում» քնարական աշխարհի բոլոր եզերքները իրար հետ կապում էին այգարացի առանցքային գաղափարով, ապա 1934 թ. լուս տեսած «Գիրք ճանապարհ» ժողովածուի մեջ միավորիչ առանցք է ճանապարհի թևան: Չարենցն այն բանաստեղծներից է, որոնց համար զարգացումը ոչ թե համդարտ ու համաշափ ընթացք է, այլ՝ ավելի ու ավելի բարձր ու հեռահար թոփշքներից շղթա: Նրանց ստեղծագործության մեջ լուսաբանչությունը նոր էջ բաց է անում անձայրածիր աշխարհի մի նոր անձանոթ եզր, նրանց ստեղծագործական տարրեր հասակները գրեթե անձանաչելիորեն տարրեր են իրարից: Այս տեսակենտից՝ Չարենցից հետ կարող է համեմատվել թերևս միայն Դամիել Վարուժանը:

«Գիրք ճանապարհ»-ում Չարենցին, ինչպես իր մեծ նախորդներին, ամենից առաջ հետաքրքրում է մայր ժողովրդի դարավոր մաքառումների ուղին: Հատկապես «Մահվան տեսիլ» և «Պատմության բառուինականություն» պոեմներում բանաստեղծ փորձում է նորագոյն ժամանակների բարձրությունից վերահիմնաստավորել սերունդների հոգևոր տքնության խորհուրդը: Այսօր, իմարկե, չի կարելի անվերապահ ընդունել հայ անցյալի արժեքներին Չարենցի տվյալ հակասական գնահատական-ները, որոնք ցավալի տուրք էին ժամանակի հոգեքանությանը: Ինչպես կարելի է, օրինակ, համաձայնել բանաստեղծին, երբ առ իր հզոր խոսքի անդիմադրելի գրավչությամբ ուզում է ներշնչել, թե միշտադարի մեր հոգևոր մեծերի՝ Խորենացու և Եղիշեի, Նարեկացու և Շնորհալու «տքնությունը եղել է զոր, որքան էլ հմուտ ու հանճարեղ»: Սակայն բարերախտաբար «Գիրք ճանապարհ»-ի անկրկնելի դեմքը որոշում են ոչ թե այսպիսի մասնակի վրիպումները, որոնք, ի դեմք, բանաստեղծ վերապահում է իր վերջին երգերում, այլ այն տիրապետող գաղափարը, թե ժողովորդի հոգևոր պատմությունը միասնական է, այդ պատմության շարունակությունն ու զարգացումն է ստեղծագործական որոշումների մի ոգեշունչ երթը, որ սկսվել էր սպառական դարաշրջանում:

«Գիրք ճանապարհ»-ում բանաստեղծ հասնում է այն մեծ ճշմարտությանը, որ մի փոքր ավելի ուշ, «Կոմիտասի հիշատակին» պոեմում հնչում է այսպես.

Այս, ծաղկի սերմն՝ հայրենի Հող չի հաճախ ճանաչում, Բայց սերմն հոգու—միայն իր Հայրենիքում է աճում...

Չարենցը հայ երգի նոր հայրենիքում Սովորական Հայաստանում, բարձրացող կյանքի երգիչն էր, նրա հոգևոր վերելիք նախանձախնդիրը: Նրա վերջին գիրքը ծայրից-ծայր իրոք թրթում է հոգենեն շնչով. «Ոգին նախրյան երգի», նոր օրերի հողմերով տարված, թևածում է աշխարհի հեռաստաններում, կիզվում է «հողմերում հանուր», որպեսի «ամբարի իմաստ ու խորհուրդ»: Բայց միշտ «հարազատ է մը նում մեզ Տերյանը»: Մեր բանաստեղծական թոփշքը, որքան էլ հեռու եզերքների ձգտի, կենդանի և ուժեղ է իր ինքնույթամբ միայն: Այսպես իրար են ձուլվում «թոփշքը մեր լայնահուն» և մեր «քարքարը նախրյան», որպեսի մեր երգը՝

...եղանակ աշխարհի համերգում հեքնահուն նվազներ ծնի:

Հզոր ու ինքնահուն այդ նվազներից մեկը «Գիրք ճանապարհին» էր: Հոգու հազար թեկերով բանաստեղծը կապված է իր մեծ օրերի երթին: Բայց նոյն թեկերի մյուս ծայրերը, արյունատար երակների նման, սնում են նրա համարը հայրենի հազարամյա երգի իմաստուն ավանդներով, մարդկության հոգևոր փորձի անհուն հարստությամբ: Լինելով «այդ շնորհյալ ի վերուստ»՝ նա իրեն գտում է նախորդների ժառանգորդ ու պարտապան: Իր հոգևոր առաքելության ինքնակատահ գիտակցությունը մեծ բանաստեղծին մարգարեական պայծառատեսություն է ներշնչում.

Ինչ ունեցել է ժողովուրդը քո ՀՅում, անցյալում—լուսավոր ու վեհ, ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ— Ողջ հավաքել ու քեզ է տվել:— Տվել է, որ դու այդ ամենը այս Օրերին խառնած, խոր հավատով լի՝ Պարզես գալիքի ցնորքին անհամ— Եվ ընդմիշտ մնաս մեծ ու սիրելի:—

Տվել էր հոգևոր հատուցման ժամը: Իր «քառամամյա կյանքի քարն ուսերի վլա», իր «արարչական գործի ամագորույն կեսին»՝ Չարենցն ստեղծագործական հաշիվ էր տալիս գալիքին՝ անցյալից ու ներկայից ժառանգություն ստացած հարստությունների դիմաց: «Երբեք սերմնացան՝ շընուալ» բանաստեղծը մլատ էր դարձել՝ «Եղ-

ներով հնձի»: Եվ իրոք, չարենցյան նոր երգերի սակավաբնյա տողերում խոր ու լայնահուն իմաստոթյուններ էին ծավալվում: Այժմ հանճարավլայել արժանապատվությամբ էր վարդում նա իրեն «լիարու ձնած շնորհների» Բետ: «Գիր ճանապարհ»-ի լավագույն էջերի խորը ծանրացած է ժամանակի ճշնարիտ հոգևերով, այդ երգերում եռում է նոր կյանքի կառուցման հզոր տարերքը, իսկ ներշնչանքի վրա հանդարտ թևածում է Նարեկացու և Ծնորհալու, միջնադարյան տաղերգուների, անանուն ժողովրդական երգիշների ոգին ու ոճը: Բանատեղի ներքին լեզուն հիմա արդեն համարունչ է մեր հազարամյա դպրության, «Բին այրերի» բարբառին: Նըրանց հավաքական կերպարը բանատեղի ոգեշունչ արվեստով գծում է վերշին օրերի անավարտ ձեռագրերից մեկում: Ամացած վանքում, մոմի դողողոջուն լուսի տակ, եղեգնա գրչով նա՝ «փառաթել ու վեճ» ծերումնին, «մազաղաթի վրա ջինջ» դրոշում է «անջնջելի երկաթագրեր»: Դեմքին «անեղծելի խոռ» կա, աչքերի մեջ շղում է «անարատ ու անաղարտ ոգին վկայի»: Վերացած ու վեհացած՝ նա անշտապ ու հանգիստ ծերթում է «մարդկային կյանքի» գիրքը.

Խորասուզված իր անեզր  
Մորքի օվկիանում,—  
Օրերի վեպն է անէ  
Նա բառ-առ-բառ հանում...

Ակամա հիշում ես մի ուրիշ, ժամանակով մեզ ավելի մոտ ու սիրելի կերպար՝ «Դեպի լյառն Մասիս» պոեմից: Խաչատուր Աբովյանն է դա, որի լուսավոր կյանքն ու գործը մեր նորագույն դպրության հիմքն ու հենարանն են: Հիշում ես նաև մեծ Կոմիտասին, որ Զարենցի պաշտամունքն էր, «մեր որք հանճարի ձալնը»: Իբրև նոգե-

գավակ՝ բանաստեղծը նրա հետ դեգերում է աշխարհից աշխարհ՝ հոգևոր հաց փընտրելով իր և իր ժողովորդի համար: Հորդարում քնարականությամբ են շնչում մեծ երգահանին նվիրված չարենցյան տողերը.

Վերադարձել ես դու, հայր,—  
Եվ հիրավի՝ իմ ձեռքով  
Ես չեմ արդյոք մի խալար  
Ու ցրտահար երեկո—

Փակել աչքերդ հանգած —  
Եվ իմ սրտով զմուել,  
Որ հայրենիք մինչև գաս՝  
Հեռուներում շմբես...

Այս կերպարներում 20-րդ դարի բանաստեղծն, անշուշու, որոնում էր նաև սեփական կյանքի ու գործի խորհուրդը: Նըրան էլ վիճակված էր իր «դժվար դարում» ծանր մարտումներով առաջ տանել հայրենի երգի արահետով, որ «դարի բորբքում սրտի» միջով գնում էր ձուլվելու մարդկության մտքի լայնահուն պողոտային: Բնությունը շուայլ շնորհներով էր օժտել մեծ բանաստեղծին, հարազատ ժողովուրդը առատորեն սենել էր հոգեղեն կաթով, իր փոփորկուն դարը նրա հանճարի նետին տվել էր թոփշի անձայրածից ասապարեզ ու վսեմ նշանակետ: Եվ այս ամենի հանդեպ նա պարտք չմնաց ժողովորդին ու ժամանակին: Իր գործի անմահության արժանապատիվ գիտակցությամբ Զարենցն իրավունք ուներ գրելու:

Ծնվեցի ես Ղարսում, սակայն՝ իմ հոգում  
արևն նրանի  
Հար հուրիրաց, իբրև հին, հայրենի կարոտ  
մի անմար,—  
Բայց հայրենիքը ոգուս—բովանդակ  
աշխարհը եղավ:—

